ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-083-05.11.2021-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հայտարարված արտակարգ դրության կամ սահմանված կարանտինի ընթացքում աշխատանքի ներկայանալիս բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն աշխատողի կողմից չներկայացնելու դեպքում գործատուն աշխատողին չի թույլատրում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային պարտականությունները եւ այդ ժամանակահատվածի համար չի վճարում աշխատավարձ՝ մինչեւ սույն մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 113-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով.

«13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետեւանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում՝ ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:».

2) 2-րդ մասը «115-րդ հոդվածի 1-ին մասով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով՝ 115-րդ հոդվածի 1.1-ին մասով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան 3 օր առաջ:».

2) 2-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին, 1.1-ին մասերով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասում «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 216-րդ հոդվածը «պահանջները» բառից հետո լրացնել «, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կ-083-05.11.2021-ԱՍ-011/1 *ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ*

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հայտարարված արտակարգ դրության կամ սահմանված կարանտինի ընթացքում ~~Այ~~աշխատանքի ներկայանալիս բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն աշխատողի կողմից չներկայացնելու դեպքում գործատուն աշխատողին չի թույլատրում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային պարտականությունները եւ այդ ժամանակահատվածի համար չի վճարում աշխատավարձ՝ մինչեւ սույն մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 113-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով.

«13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետեւանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում՝ ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:».

2) 2-րդ մասը «115-րդ հոդվածի 1-ին մասով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով՝ 115-րդ հոդվածի 1.1-ին մասով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան 3 օր առաջ:».

2) 2-րդ մասում «Սույն հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին, 1.1-ին մասերով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասում «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 216-րդ հոդվածը «պահանջները» բառից հետո լրացնել «, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «8-10-րդ» բառերից հետո լրացնել «, 13-րդ» բառով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից~~ և գործում է մինչև Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված արտակարգ դրության և (կամ) կարանտինի ավարտը:~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-083-05.11.2021-ԱՍ-011/0) ԵՎ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-083[1]-05.11.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-083-05.11.2021-ԱՍ-011/0)					
1.	ՀՀ կառավարություն	**1-ին հոդված**	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 108-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասում «Աշխատանքի» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հայտարարված արտակարգ դրության կամ սահմանված կարանտինի ընթացքում» բառերը: Առաջարկվող լրացման նպատակն այն է, որ նախատեսվող կարգավորումները գործեն յուրաքանչյուր անգամ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված արտակարգ դրություն հայտարարվելու կամ կարանտին սահմանվելու ընթացքում:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	**6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենսգրքի 216-րդ հոդվածում առաջարկվող լրացման մեջ «Հայաստանի Հանրապետությունում»	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան	Ընդունվել է

			բառերից առաջ առաջարկվում է լրացնել «, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող» բառերը: Առաջարկվող լրացման նպատակն այն է, որ նախատեսվող կարգավորումները գործեն յուրաքանչյուր անգամ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված արտակարգ դրություն հայտարարվելու կամ կարանտին սահմանվելու ընթացքում:	փոփոխությունը:	
3.	ՀՀ կառավարություն	**8-րդ հոդված**	Նախորդ երկու կետերում ներկայացված առաջարկություններից ելնելով՝ առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածից հանել «և գործում է մինչև՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված՝ արտակարգ դրության և (կամ) կարանտինի ավարտը»:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-083[1]-05.11.2021-ԱՍ-011/0)					
1.	ՀՀ կառավարություն	**Վերնագիր**	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	**3-րդ հոդվածի 2-րդ կետ**	Առաջարկում ենք «լրացնել» բառից հետո լրացնել «հետեւյալ բովանդակությամբ» բառերը: Առաջարկությունը խմբագրական բնույթի է:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	**4-րդ հոդված**	Առաջարկում ենք «լրացնել» բառից հետո լրացնել «հետեւյալ բովանդակությամբ» բառերը: Առաջարկությունը խմբագրական բնույթի է:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	**4-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացվող նոր՝ 16.1-ին հոդվածի 1-ին մասում «Աշխատանքի» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հայտարարված արտակարգ դրության կամ սահմանված կարանտինի ընթացքում» բառերը: Առաջարկվող լրացման նպատակն այն է, որ նախատեսվող կարգավորումները գործեն յուրաքանչյուր անգամ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված արտակարգ դրություն հայտարարվելու կամ կարանտին սահմանվելու ընթացքում:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

5.	ՀՀ կառավարություն	**5-րդ հոդված**	Նախորդ՝ 4-րդ կետում ներկայացված առաջարկությունից ելնելով՝ առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածից հանել «և գործում է մինչև՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված՝ արտակարգ դրության և (կամ) կարանտինի ավարտը»:	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է